# ԱՂՈԹՔՆԵՐ

## 1 (1345). ԵՐԵԿՈՅԱՆ ԱՂՈԹՔ[1]

Հիսուս բերդ, Քրիստոս պարիսպ,
Մեծ-մեծ պարիսպ,
Պարիսպըս տռնոն ա իակւած,
Բանալիքը չար հրիշտակաց,
Ավետարանն ա խըրտսին,
Սաղմոսարանն ա բերանին:
Էլ չի վախես սիրտս փորիցս,
Տերն մեր Հիսուս Քրիստոս, ամեն:
Էս տունը ներատուն ա,
Քրիստոսս մերատուն ա,
Չորս դըլը բևեռած ա,
Չորս դըլը զիլմեխած ա,
Գավազանը սռանը ինկած,
Փիլոնը կտերը պնդած:
Օ՜հ, հրես էկան իրեք-իրեք կտրըր.
Մինը՝ Հիսուս, մինը՝ Քրիստոս,
Մինը՝ սուրբ Ստեփանոնոս,
– Ձեզ հավսսամ, դուրն հ՞ք զնում,
– Հիվանդի տռնոն ենք գնում
Ծննդկանի կտրըր,
Բանալիքը բարցին քցենք,
Չարը վրեր խորտակվի քյնա:
Օ՜հ, հրիս եկավ բոզ ծիավոր սուրբ Սարգիս,
Աչակնքեց, խաչն բազկեց,
Հյուր եմ հրեշտակաց,
Արթունանց սռաքելաց,
Ձայն սվի իննըստա հրեշտակաց:
Սաթայիլներին կալեցեք, կապեցեք,
Ոտը զիտնին բնեռնեցեք,
Պոչը երկինք պատրուսեցիք,
Ո՛չ քունը խանգալի,
Ո՛չ սրազը զարհուրի:

## 2 (1346). ՉԱՐ ԱՉՔԻ ԱՂՈԹՔՆԵՐ

Նախ՝ Հայր մեր…

Չար աչքը, չար սիաթը, չար նիաթը,
Չար աչքավորի չար աչքը ածեմ
Չար քացախը,
Ուռի պես տռղմ,
Օձի պես սողս,
Մազի պես մըզմըզոսի,
Խախալի պես խըլխըլոսի,
Չար աչքը չար աչքավորի: Ամեն[2]:

### 3 (1347).

Տոսսարը, ստսստըը, տոսստըը, որդին,
Օխտը չհառսմ օձ կքեն, մածուն մերեն,
Ով կերավ՝ նա ճաքեց,
Ով տեսավ՝ նա զարմացավ,
Մարդ էր՝ մազը մրքին,
Կնիկ էր՝ ծիծը ծոցին,
Հիսուս Քրիստոս,
Թու՛հ չար նիաթին, չար սիաթին[3]:

### 4 (1348).

Տերունական աղոթքը ասել սկզբում և վերջում:

Ե՛վ խաչավսրյսս, և՛ տսչսս, և՛ մսդս,
և՛ աղսնս, և՛ ըսծս
Թըրըիրողի և երմողի կամ ոռնիկ որբն ծաղկել ա
կամ ածինը ծնվել ա,
Ավագ պսպի հրամանով՝ երկրիս բոլորութին,
Սբ. Աստվածամոր կսքնովը
Թու՛հ չար աչքին,
Չար սիաթին,
Չար նիաթին[4]:

### 5 (1349).

Քարը մատին ու վըետին,
Քարն ու քացախը բերանին,
Աստված օրհնի պսռավին,
Վրեր նստել է յոթ շըհարին

---

[1] Բանասաց Մովսես Սառիկյանի մոր ասածը (ծանոթ. բանասացի):

[2] Տեր Սարգսի ասածը (ծանոթ. բանասացի): Բանասացի համար եեղինակության հարց է, և կարևոր նշանակություն ունի, թե ումից է սովորել աղոթքը: Աղոթքի սկզբում և վերջում պետք է ասել «Հայր մեր»-ը: Աղոթքի ազդեցությունը լաաարյալ դարձնելու եամար պեաք է երեք անգամ կթկնել (ծանոթ. բանահավաքի):

[3] Պողոսանց Խաթունի ասածը: Աղոթքի սկզրից և վերջից ասել տերունական «Հայր մեր» աղոթքը: Աղոթքը կրկնել երեք անգամ կամ յոթ անգամ (ծանոթ. բանասացի):

[4] Բանասացի եոըաքըոջ՝ Անուշի ասածը (ծանոթ. բանասացի):

Ի չար նիա̈թին,
Ի չար սհաթին
Օցը կըթի, օցը մորթի, օցը ուտացնի,
Թե կնիկ ա՝ պոչը վեր կյա̈,
Թե մարթ ա՝ միրուքը վեր կյա̈,
Թո՛ւ, թո՛ւ, թու̃:

6 (1350).

Աչկը ըչկըհարի,
Հավի պես հալվի,
Սըմի պես ստղվի,
Օցի պես սըղըքվի,
Օրըպակաս շըղաիւլի:
Աչկը տվողի աչկը տո՛ս կյտ:

7 (1351).

Ազին, ազին, տեղին տզին
Օժենտ, բոժենտ.
Մեծին փոքրը ութեն, ութեն
Ըանծանի քաղծր կաթեն
Սուրբ Սարգսին ձիու ծարով
Օցը մորթեցին,
Ուտողը պատռվեց,
Անց կենողը զորհուրվեց: Թո՛ւ, թո՛ւ:

8 (1352).

Տուս տուր, տո՛ս տուր, տո՛ս տուր,
Վորթով նստեց,
Օց կթեց, մածուն մերեց,
Ով կերավ՝ նա ճաքեց,
Ով տեսավ՝ նա զարմնցավ,
Ով տեսավ՝ կլինն էր՝
Ծիծն էր ծոցին,
Մարթն էր՝ մազը երեսին,
Թո՛ւ չար աչկին,
Թո՛ւ չար սհաթին,
Թո՛ւ չար նիտթին,
Թո՛ւ ժանգոտ պերտնին:

9 (1353).

Աչկը աչկըհարանք.
Քարը ծեռին,
Քարը ոտին,
Օիտը ստղաքարը աչկի լիսր միկտա:
Սև-ըսիպտակ օցի կաթը
Շատ անի, քիչ տնի,
Աչկի լիսը միկտա:
Օցը ոնններովը փթաթվի,
Դորր քյնա̈,
Օցը ոնններովը փթաթվի,
Վայ էն օրին,
Որ ես աչկն եմ տվել,
Աղն աչկր տտռնա̈, միկտա:

10 (1354).

Ըրեխեն ըըօրոցըմը,
Սազմաը ծոցըմը,
Թըշքըշան կետը,
Վըշվըշան քարը,
Սև օցի քիտը՝
Աչք տվողի աչքի լիսըմը:

11 (1355).

Քար ու մատ,
Մատ ու քար,
Աստված ըդորմի էն պատավին,
Նստել է շահարին,
Նուռ ու քացախը բերանին,
Օց կըթի, օց ուտի,
Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ
Չար սըհաթը,
Չար նիաթը:

12 (1356).

Ու՞ր ես քյնըմ զող սըտանա,
Չար աչկին, չար նափասին,
Թու, չար նափասը փչվի, սրվի:
Ըրկաթա սուրը, պըղնտա թուրը,
Չար աչկին, չար նափասին:
Եզն ու լուծը, կովն ու կուրծը,
Չար աչկին, չար նափասին:
Չար աչկը, չար նափասը,
Փչվի, փշրվի, տըաքի, շաղ հընցնի,
Թու չար նափասին:

---

[5] Աշուղ Արշա՚կի աղոթքներից, աղոթքը կրկնում են երեք, հինգ կամ յոթ անգամ (ծանոթ. բանասացի):

Աշուղ Արշակը թովուզեցի Արշակ Լազրովն է՝ «Կռիվը ծաքեցավ Թովուզ կեարմը» երգի հեղինակը (ծանոթ. բանահավաքի):

13 (1357).

Խուչափայտը սևին, ճաղին,
Թո՛ւ, քո՛ւ չար աչկին:
Մազս, հույս սևին, ճաղին,
Թո՛ւ, քո՛ւ չար աչկին:
Թրախոսը չըրախոսին սևին, ճաղին,
Թո՛ւ, քո՛ւ չար աչկին:
Կամած ծին ծնել ա, սևին, ճաղին,
Թո՛ւ, քո՛ւ չար աչկին:
Ավազ պլսալի հրամանով սևին, ճաղին,
Թո՛ւ, քո՛ւ չար աչկին:

14 (1358).

Չար աչկը,
Չար ճիպը,
Չար ղուղուքը:
Արգարն էկավ,
Սո՛ւրոն ընկավ ճուրը,
Մարքը աչկը ավավ,
Մուրուքը լըսվ շալակը:
Կնիկը աչկը տվավ,
Մազը ընկավ աչկը:
– Պսալիկ ասլս, իլի՞ ես լսցում,
– Ի՞նչ անեմ, որ լսց չըլնեմ,
Անաչկը աչկիս եասաց,
Օցը ծնեց, ուխտը սասկեց:

15 (1359).

Քյնացի սև մերին,
Շոռ տվի սև քարին,
Տուրս եկավ սև օցը:
Սուրբ Աստվածածնի աղոթկովը
Ջնջվի չար աչկը.
Քար ու քացախը պերանը,
Փուշ ու տատասկ աչկերը:

16 (1360). ԳԱՅԼԿԱՊԻ ԱՂՈԹՔՆԵՐ

Գայլը կապեին Նրկւս բբով,
Անաստվածածնի քաղծր կաքով,
Սուրփ Սաքքսին ձիին ձաոով,
Տեր Սովսեսի զավազանով,
Լուսափրչի սուրփ եավառով,
Լեզուն կալի, ակռան քափի,
Եկած ճամփեն կըմոլւրվի,
Իմ աիրոջը խաչը աեսնի,
Դիվնանքի պես քող սասանի:

17 (1361).

Պասն ու աղոտկն,
Պարսեղն ու անեղն,
Ձինվորի Պարսեղը
Սուրզըր խսնդը,
Մտավ ի նեղ տասլսնը,
Կապվածն, զօծն,
Կարինն, կոկճավորն:
Չորս բևեոն,
Կողվի թշեն խաչափայտյա
Մեկն՝ ի սիրան տառանայի,
Մեկն՝ ի բերան գայլ-զազանի,
Երկու բութով, յոթն մատնով,
Քրիստոսի երամանով,
Աստծու մոր քաղծր կաքնով,
Օեանես Մազըրիչի աղոտկովը՝
Կիլի ըոնիսր կապված կենա,
Աչկերը խըփված կենա:

18 (1362).

Ձինվոր Պարսեղ,
Նեղ տապսն,
Զօցն, կարինն, կարկաչովը
Ի նեղ տապսն.
Սուրբ Օհանեսի աղոքքով,
Սուրբ Ակրաչի աղոքքով,
Աստվածամոր քաղծր կաքնով
Կապված կենա գայլի, զազանի ըոնխը:
Հայր մեր, Անուն Հոր և Որդվոյ
և Հոգվույն Սրբոյ, ամմեն:

19 (1363).

Պասն և աղոտկն
Պարսեղ զինվորին Սուրազիսնդն
Մտավ ի նեղ տապսնն
Զօծն, զկարինն,
Կարկաչավոր,
Գողը զիշերր
Չորս բևեոյան խաչափայտն
Մեկը գայլ զազանի
Կապած կենա,
Ոչ մեծանա,
Ոչ մոտանա կարմիր կովից:

## 20 (1364).

Աջն և խաչափայտը Քրիստոսի,
Չրանն և զկնունքն
Հայր և Որդի և Սուրբ Հոգի կապեալ,
Կապեալ չար զազանաց բերանը
Ի լերինս, ի բլուրս, ի դաշտս,
Ընկղմի չար օրն և չար սհաթն
Քրիստոսի սուրբ խաչովն,
Աստփածամոր քաղցր կաթովը
Միրտ խփի կամ Աստափիրած հող գա
Ռոճիկ որթն ծաղկի կամ ջրին ծնանի,
Չէ արձակեալ այս կապվի,
Թե՛ ջրային, թե՛ հողմային պինդ կապվի[5]:

## 21 (1365). ԱԼՄԱՉԻ ԱՂՈԹՔ[6]

Կաթը տա,
Թքած քու աչկին,
Արյուն տա, թքած քու աչկին,
Սաղայելն ա հոքուտ նստած,
Հոքիտ ծով ա ալեկոծփած:
Կաթ տա, թքած քու էրիսին,
Արյուն տա, թքած քու էրեսին,
Ետ շուռ արի քի շըղըհարի,
Սաղայելին հոքուցըտ հանի:
Հոքիտ խարխանը արա,
Սրտիտ տուռը պնդ արա,
Չազիտ սրտիտ տեղ արա,
Բարի աչքով ձագիտ նայի:
Արուտ արա, կուրծքըտ լարի
Չագիտ պահի կշտացրու:

## 22 (1366). ՄԿՆԱՏԱՄԻ ԱՂՈԹՔ

Լևոն և Մարյամ,
Եփրեմի աչկն ա,
Մարյամի լեզուն,
Ռամ կանա, ռամ կանա, ռամ կանա ու
Եփրեմ ա, Եփրեմ ա, Եփրեմ ա ու,
Մարյամ, Մարյամ ա, Մարյամ ա ու:
Եկել ես կտուրը,
Վեր ե՛ տուռը,
Ռամ կանա, ռամ կանա, ռամ կանա ու,
Եփրեմ ա, Եփրեմ ա, Եփրեմ ա ու,
Մարյամ, Մարյամ ա, Մարյամ ա ու:
Էրկանքը էրկանքից անջատվի.
Ցավը քեզանից անջատվի:
Ռամ կանա, ռամ կանա, ռամ կանա ու,
Եփրեմ ա, Եփրեմ ա, Եփրեմ ա ու,
Մայրամ. Մայրամ ա, Մայրամ ա ու:

## 23 (1367). ՄԿՆԱՏԱՄԻ ԱՂՈԹՔ

Սկնատամի չորս կողմովը գիծ քաշել և ասել «Հայր մեր» տերունական աղոթքը և գրել այս աղոթքը.

Ամրամ ամրամու,
Եփրեմ Եփրեմու
Ռամկական թեանայ:

և շրջակայքի գիծը ուղղելով՝ գրելուց հետո դարձյալ ասել տերունական աղոթքը[7]:

## 24 (1368). ԿԱՐՄԻՐ ՔԱՄՈՒ ԱՂՈԹՔ

Կարմիր քամու չորս կողմով գիծ քաշել և տերունական աղոթքը ասել սկզբում և վերջում.

Սաստեաց ի ծով կարմիր ու ցամաքեցաւ,
Առաջնորդեց նոցա ընդ անդունդեն
Որպես ընդ անդաւնդս,
Վաքսում աղոթեն Պարսեղին նետվաներին,
Պարսեղ մնախանըր,
Մտավ նեղ տապան
Կապեալ զօծն, կարիճն, կարկաճավերանց,
Որ գիշերը զորը չորս պոլոր խաչափայտին
Մեկն՝ սիրտն սատանին,
Մեկն՝ բերան գայլ գազանին,
Երկու բռով, ութ մատնով,
Աստվածածնա քաղցր կաթնով,
Սուրբ Հովհաննեսի աղոթքով կապված կենա:
Էտ իմացի ինչ էր կորավ:
Քրիստոս խաչտ,
Բազմաղոթքն Պարսեղին,
Նետ ու անեղ զինվորին,
Պարսեղ մնախանըր մտավ նեղ տապան
Զօծն, կարիճն, կարկաճավերանց,
Մեկն՝ սիրտն սատանին,
Մեկն՝ բերան գայլ գազանին:
Երկու բռով, ութ մատնով,
Աստվածածնա քաղցր կաթնով,

---

[5] Թովուլեցի Ներկարարյան Հովհաննեսի սովորեցրած գայլկապի աղոթքը (ծանոթ. բանասացի):

[6] Ասվում է այն դեպքում, երբ անասունը (կովը, գոմեշը, այծը, ոչխարը) նոր ծնված ձագին չի թողնում մոտենալ և կաթ ծծել (ծանոթ. բանասացի):

[7] Թովուլեցի Ներկարարյան Հովհաննեսի ասածը (ծանոթ. բանասացի):

Քրիստոսի խաչափայտով,
Ավագ պապի հրամանով,
Սուրբ Հովհաննու աղոթքովն կապված կենա,
Էտ իմացի ինչ էր կորուսյալը[8]:

## 25 (1369). ՎԱԽԻ ԱՂՈԹՔ

Հայրը մեր, Անուն Հոր և Որդվոյ
և Հոգվույն Սրբոյ:
Քրիստոսն իրի,
Որեխեն խտըսին
Էլ չի վախի
Սիրտը, վորը կլխին:
Հայր մեր, Անուն Հոր և Որդվոյ և
Հոգվույն Սրբոյ, ամեն:

## 26 (1370). ԳՈՐՏՆՈՒԿԻ ԱՂՈԹՔ

Այ սանի, խոշ գովրու
Ջրլի երը բոշ գորդու: Հայր մեր և այլն:

## 27 (1371). ՀԱՇԱԹՔԻ [9] ԱՂՈԹՔ

Էս առնր առճարի ա,
Տաճարը Սրբմանի յա,
Սարյամը միջին քնած ա,
Ոչ քնած ա, ոչ զարթուն:
Հրես էկավ իրեք րոզ ծիավոր՝
Մինը՝ Հիսուսը,
Մինը՝ Քրիստոսը,
Մինը՝ պարարիչի աստվածը:

---

[8] Դարձյալ Հովհաննես ծերունու սովորեցրածը (ծանոթ. բանասացի):

[9] Հաշաթք — ուշաթափություն (ծանոթ. բանասացի):